

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԵՊՔ

ԼՐԱՏՔ. Հասարակաց տեսանին հաշուեցուցէն  
կ'երևայ թէ ինկիլթէռապի գլխաւոր տասուեր-  
կու նաւահանգիստներէն եկած մաքսը՝ անցեալ  
տարուան մէջ աս համեմատութիւնն ունին եղբէ.

Հոնտարա	տարրուան	մաքսն է	14,137,126	լ.	Ա
Նիվելիուշ	.	.	34,891,847	.	.
Հըլլ	.	.	10,366,610	.	.
Պրիմթըլ	.	.	362,039	.	.
Նիսուքէսէլ	.	.	920,068	.	.
Սութհէմթըլն	.	.	1,859,647	.	.
Լիթհ	.	.	366,552	.	.
Կլէպոյ	.	.	3,768,646	.	.
Կրինոք	.	.	355,693	.	.
Տըպլն	.	.	50,364	.	.
Քորք	.	.	116,268	.	.
Պէտքէսթ	.	.	56,506	.	.

Աս ցուցակէս կ'երևայ թէ բոլոր Միացեալ տէ-  
րութեան մէջ՝ Լիվոփուղն ծովային վաճառաւակա-  
նութիւնը ամենէն աւելի բանուին է, որով եւած  
ու մտած ասլրանքներուն մաքսն ալ քան զորիւ-  
ներունը աւելի է:

የኢትዮጵያውያንና ሁሉ የተከተለውን መመሪያዎችን በኋላ :

„ՍՈՅԵ Միացեալ տէրութեան շոգէկառաց վրայ հանած ցուցակէն կ'երևայ՝ թէ անցեալ տարուան առջի իրեք ամիսներուն մէջ շոգէկառագ ձամբորդ ներուն թիւն է եղեր 37, 881, 703 : Հզրաբոյն ու անակնկալ դժբաղցութեանց մատնուեր ու մեռեր են 11 ձամբորդք ու 34 պաշտօնատարք երկաթուղեաց . վիրաւորելցց թիւն ալ է 142 ձամբորդք , 10 պաշտօնատարք : Իրենց յանդգնութենէն ու անխոհէմութենէն մեռնողներ՝ 8 ձամբորդք , 21 պաշտօնատարք . իսկ վիրաւորեալքն են 6 ձամբորդք ու 10 պաշտօնատարք : Երկըթէ շաւիփներուն վրայ պարտելնուն պատճառաւ մեռնողներուն թիւն ալ 28 հոգի , իսկ վիրաւորելցցը 5 : Վերջապէս բոլորին թիւը 275 հոգի , 102 մեռած , 173 վիրաւոր : Իրեք ալ անձնասպանութիւն կը համբուին , 1ր կառքին մէջ , 2 ալ ձամբու վրայ :

“你說得對，我這人就是這樣子。

ՎԵՆԵՏԻԿ · Անցեալ տարուան սեպակեմբերի կյան  
Յ · Քանառով անունով փաստաբանը՝ քաղթիս Ա-  
թէնէոն ըստուած Ճեմարանին մէջ հմտւ և շատ  
օգտակար ճառ մը խօսեցաւ՝ մեռելները շուտով  
ու առանց լաւ քննութեան չթաղելու վրայ, ո-  
րուն մէջ կը ցուցնէր շատ պատմութիւններով  
թէ որչափ դժբաղդութիւններ հետեւած են աս  
բանէս, և ինչպիսի կերպերով կրնայ աս բանիս

գէմի առնութիւն . և թէպէտ ուրբիչ միջոց ալ ըբայց՝  
բայց բարեկամութեան ապարագք և կրօնից ապար-  
ագրած գութն ու սէրը՝ բաւական Են մեռնողն ըն-  
աանիքը քաջալերելու, և յազդել տալու ան սպա-  
րական վախն ու սարսափը՝ որ առներնիս մեռել  
մը եղած ատեն կ'իմանանք, որով կը փութանք  
շուտով ալ թալել տալու :

Կարգե դասըն հանձար 5ը :

ՓԱՐԻԶ. • Մօտերս Բաբէնիմ իշխան ըսուած օրա-  
գիրը զարմանալի բան մը կը պատմէ՝ որովհաւ կ'ե-  
րենայ թէ ինչպէս հանձարը աղքանին ու հարուս-  
տը վնարեր, և թէ ամենէն ողորմելին ու խեղչ-  
մարդն աշ երը խելք ու յաջողակութիւն ունի,  
կընայ իր բազդը վնելու յառաջ երթաւ:

Տէֆորժ անունով պատահի մը իր հիանալի արա-  
մառութեանը համար աս օրեւո մեծ անուն հանեց .  
ասիկայ Գաղղիոյ Ըէր նահանգը ապատ ու խեղչ  
տնէ ծնած էր . պատիկուց հովուութիւն ընելով ,  
ետքն ալ որմադրութե ձեռք զարկեր է : Թուա-  
բանութեան ու հաշիներու մասնաւոր յարու-  
րութիւն ունենալով պարապ ատենները մոքով  
հաջիւներ ընելով կը վալոր : Անգամ մը Սէն գե-  
տին կամրջին վրայ աշխատելու ատեն՝ հարկաւոր  
եղաւ գետին մէջի բանող չոգեշարժ գործւոյն ու-  
ժին՝ ջրոյն բռնութեան հետ ունեցած համեմա-  
տութիւնը գտնել : Երբոր ճարտարապետները  
զը մտած հաշուին վրայ կ'աշխատեին , մէջերնէն  
մէկը գարձաւ Տէֆորժին հարցուց . Տէֆորժ ա-  
ռանց գժուարութեան մէկէն համեմատութիւնը  
գտաւ ու ցուցուց , այնպէս որ ամէնքը ապշեցան  
մնացին : Այս բանս գիտութեանց ճեմարանին ա-  
կանը հասնելով Տէֆորժը կանչեցին ու զինքը  
փորձել ուղեցին . ու ինչպէս Բլուզ կը վկայէ՝ որ  
Ճեմարանին անդամներէն մէկն է , այս պատի որ-  
մագիրը իրենց առջև զարմանալի երագութեամբ  
ինչուան վեց թիւ՝ վեց եօմը թուով մաքով ա-  
ռանց ամեննեին բան մը գրելու կը բազմապատկեր ,  
ոյնպէս անխմալ կերպով կը կատարէր համեմա-  
տութեան ու ընկերութեան կանոնները : Դար-  
ձեալ որ աւելի հիանալի է՝ իրեք վայրկենի մէջ ի-  
րեն առաջարկուած 166, 375 թուոյն խորանարդ  
արմատը գտաւ , որ է բայց նա թիւր :

Ճեմարանը պատասխանույն աս արտաքոյ կարգի սրբամտութեանը վրայ զարմանալով ձեռք դրաւ, ու իր անդամներէն չորս գիտանական անձինք իրեն վարժապետութեան որոշեց, ամիսն աշ 100 ֆրանք իրեն եկամուտ կապերով :